# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ

ԹԻՎ 4  ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի 2020-2022ԹԹ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

## ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Բովանդակություն


1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՎՏԱՆԳ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԱՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

4.ՍԱՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ  ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

5.ՍԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ, ՀՈԳԵՎՈՐ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

6.ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ   ԳՈՐԾԸՆԹԱՑԻ  ՄԱՍԻՆ

7. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ  ԶԱՐԳԱՑՆՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԸ

8. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ   ՏՆՕՐԻՆՈՒՄ

9. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ  ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԵՏ

10. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

11. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

12.  ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԿԶԱՊԿ ՈՒՆԵՑՈՂ ՍԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ . ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄԸ ՆՐԱՆՑ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ

13. ԿԶԱՊԿ ՈՒՆԵՑՈՂ ՍԱՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.

14. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԶԱՊԿ ՈՒՆԵՑՈՂ ՍԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

15. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ  ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  ՍԵՌԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Կազմակերպության անվանումը՝**

<u>ՀՀ Արարատի մարզ, «Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի թիվ 4 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ</u>

**Կազմակերպաիրավական տեսակը՝**

<u>համայնքային ոչ առևտրային կազմակերպություն՝ ՀՈԱԿ</u>

**Սեփականության ձևը՝**

<u>Համայնքային</u>

**Հասցե՝**

<u>Հր. Թովմասյան 13</u>

**Հեռ.՝** <u>2 45 88</u>

**Պաշտոնական կայք էջ՝**

https://www.facebook.com/

Ներկայացված փաստաթուղթը ՀՀ Արարատ մարզի «Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի թիվ 4 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պահանջներին համապատասխան իրականացված ներքին գնահատման արդյունքում կազմված հաշվետվություն է: Ներքին գնահատումն իրենից ներկայացնում է հաստատության գործունեության վերլուծություն, որի նպատակն է բարելավել կրթական ծառայությունների մատուցման որակը, ինչպես նաև նպաստել հաստատության գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Հաստատության ներքին գնահատման գործընթացում ցուցանիշների և չափանիշների հաշվարկման ժամանակ կիրառվել են հետևյալ մեթոդները՝

- Վիճակագրական տվյալների վերլուծություն
- Փաստաթղթային վերլուծություն
- Դիտարկում և փաստագրում
- Հարցումների իրականացում և արդյունքների վերլուծություն

Ներքին գնահատումն իրականացված է հաստատության տնօրենի՝ 13 հոկտեմբերի 2022թ N 95/2 հրամանով կազմավորված հանձնաժողով հետևյալ կազմով՝

1.Հանձնաժողովի նախագահ՝ մանկապարտեզի տնօրեն Լ. Վարդանյան
2.Հասմիկ Մկրտչյան/մեթոդիստ/-անդամ
3.Սյուզաննա Ղազարյան /դաստիարակ/-անդամ
4.Խորեն Ուստյան /համայնքի ղեկավարի խորհրդական/-անդամ
5.Նազենի Թադևոսյան/համայնքի աշխատակազմի ԿՄՍԵ բաժնի առաջատար մասնագետ/-անդամ
6.Արմինե Հովհաննիսյան/մանկապարտեզի ծնող/-անդամ
7.Շուշան Բաղալյան /մանկապարտեզի ծնող/-անդամ
8.Լիլիթ Ղարիբյան / մանկապարտեզի ծնող/-անդամ
9.Քարտուղար՝ Լիլի Բաբազուլյան

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՎՏԱՆԳ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

| 2. Ցուցանիշ | Այո | Մասամբ | Ոչ |
|---|---|---|---|
| ա. ուսումնական հաստատությունն ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից. | Այո | | |
| բ. ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սաների ազատ տեղաշարժման համար. | Այո | | |
| գ. արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ ուսումնական հաստատության շենքին. | Այո | | |
| դ. ուսումնական հաստատության տարածքը մաքուր է, աղբը կանոնավորապես հավաքվում է հատուկ աղբարկղերում և դուրս է բերվում հաստատության տարածքից. | Այո | | |
| ե. ուսումնական հաստատության ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝ կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ. | Այո | | |

Ներքին գնահատման հանձնաժողովի կողմից իրականացվեց դիտարկում-փաստագրում, ըստ որի՝ կարելի է արձանագրել, որ ուսումնական հաստատության տարածքը մեկուսացված ու հեռացված է ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական օբյեկտներից:
Հաստատության տարածքը ցանկապատված է, անվտանգ սաների ազատ տեղաշարժի համար:
Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ ուսումնական հաստատության շենքին:

Հաստատության տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝ կրծողների դեմ: Հաստատությունը ունի 01.03.23թ.-ին վերակնքված դեռատիզացիայի պայմանագիր <<Արտաշատի Կանխարգելիչ Ախտահանում Դուստր>> ՓԲԸ ի դեմս ընկերության տնօրեն Սեթ Ստեփանյանի և ըստ պլան-ժամանակացույցի կատարվող զննման արդյունքում իրականացնում է միջոցառումներ կրծողների դեմ (պայմանագրի լուսապատճենը բերված է ստորև): Մնացյալ դեպքերում հաստատության հավաքարարի, պահակի կողմից իրականացվում է հսկողություն, որպեսզի հաստատության տարածք չթափանցեն շներ, կատուներ:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << 15 >>

ք. Արտաշատ <<01 [illegible]>> 2022 թ.

<<Արտաշատի թիվ N4 [illegible] ՀՈԱԿ>>, ի դեմս [illegible] [illegible], որը գործում է ______________ կանոնադրության հիման վրա (այսուհետև` Պատվիրատու), մի կողմից, և *<<Արտաշատի Կանխարգելիչ Ախտահանում Դուստր>> ՓԲԸ*-ն, ի դեմս Ընկերության տնօրեն *Մեր Ստեփանյանի* (այսուհետև` Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Դեռատիզացիայի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև` Ծառայություն)` համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի`

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը` առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը` իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե`

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է`

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում` այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում` նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի`

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է`

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը` ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ` արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն`

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված քայլերը.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2 օրյա ժամկետում Կատար... է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունել... պատճառաբանված մերժումը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 30000 (տառերով Երեսուն հազար դրամ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2022թ. դեկտեմբերի 25-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 և N3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**Պատվիրատու**

[illegible]

[illegible]

(անուն, ազգանուն կամ անվանում)

ՀՎՀՀ 04206999

հ/հ 241211006465 00

(անձնագրային տվյալներ կամ ՀՎՀՀ)

«Յունիբանկ» ՓԲԸ

[illegible]

(հեռախոս)

[illegible]

(հասցե)

[illegible]

[illegible]

(տնօրեն)

(ստորագրություն)

Կ.Տ

**Կատարող**

«Արտաշատի Կանխարգելիչ Ախտահանում Դուստր» ՓԲԸ

ք. Արտաշատ, Մյասնիկյան 120

հեռ. (0235)2-46-79

ՀՎՀՀ 04207778

«Հայէկոնոմ բանկ» ԲԲԸ, Արտաշատ մասնաճյուղ,

Բանկային դրամային հաշիվ

163098120005

Տնօրեն՝ Ս. Ստեփանյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Օգոստոսի ... 2022թ. կնքված
15 գնման պայմանագրի

... ԿԱՐԻՔՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՄԻՋԱՏԱԶԵՐԾՄԱՆ, ԿՐԾՈՂՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ -ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ձեռքբերվող Ծառայության նկարագիր | |
|---|---|
| Ծառայության անվանումը, ապրանքի, աշխատանքի, ծառայության բնութագրող տարրերը | Դեռատիզացիայի նկարագրությունը |
| Ստանդարտը | Ստանդարտներին համապատասխանում |
| Տեխնիկական ցուցանիշները | <<Արտաշատի կանխարգելիչ ախտահանում դուստր>> ՓԲԸ-ի կողմից պետք է մատուցվի դեռատիզացիա՝ պայքար կրծողների դեմ, ամսեկան երկու հաճախումով, յուրաքանչյուր հաճախումը՝ ըստ կատարողական թերթիկի. |
| Որակը | Բարձր |
| Անվտանգությունը | Տվյալ վայրում դրված դեզնյութերին ձեռք չտալ, սննդամթերքը և օգտագործվող ջուրը պահել փակ վիճակում, մնացորդային գրավչանյութերը հավաքվում է ախտահանման կենտրոնի աշխատակցի կողմից |
| <Ծառայության անվանումը, ապրանքի, աշխատանքի, ծառայության բնութագրող տարրերը | Դեզինսեկցիայի նկարագրությունը |
| Ստանդարտը | Ստանդարտներին համապատասխանում |
| Տեխնիկական ցուցանիշները | <<Արտաշատի կանխարգելիչ ախտահանում դուստր>> ՓԲԸ-ի կողմից պետք է կատարվի դեզինսեկցիա՝ պայքար կենցաղային միջատների դեմ, ըստ կատարողական թերթիկի և գրաֆիկի. |
| Որակը | Բարձր |
| Անվտանգությունը | Դեզինսեկցիայից հետո մուտքը տվյալ վայր արգելվում է, հերմետիկ փակել 2-3 օր՝ ոչ մի աշխատանք չկատարելով ներսում, որից հետո օդափոխել և կատարել աշխատանք |
| Ծառայության անվանումը, ապրանքի, աշխատանքի, ծառայության բնութագրող տարրերը | Դեզինֆեկցիայի նկարագրությունը |
| Ստանդարտը | Ստանդարտներին համապատասխանում |
| Տեխնիկական ցուցանիշները | <<Արտաշատի կանխարգելիչ ախտահանում դուստր>> ՓԲԸ-ի կողմից համապատասխան վայրում կատարել ախտահանում քլորակրի փոշիով կամ քլորակրի 1 տոկոսանոց լուծույթով |
| Որակը | Բարձր |
| Անվտանգություն | Մասնաշենքում դրված դեզնյութերին ձեռք չտալ, սննդամթերքը և օգտագործվող ջուրը պահել փակ վիճակում, մնացորդային նյութերը հավաքվում են |

2.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԱՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

(ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով սահմանված՝ անվտանգության և առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերը) (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով սահմանված՝ անվտանգության և առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերը)

| Ցուցանիշ | Այո | Մասամբ | Ոչ |
|---|---|---|---|
| ա. ուսումնական հաստատության շենքը վերանորոգված է. | | մասամբ | |
| բ.ուսումնական հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով սահմանված շահագործման անվտանգության նորմերին. | | մասամբ | |
| գ. շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր. | այո | | |
| դ.ուսումնական հաստատությունն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով. | | մասամբ | |
| ե.շենքը հարմարեցված է կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԶԱՊԿ) ունեցող սաների անվտանգ տեղաշարժ ապահովող պայմաններին (թեքահարթակներ, լայն դռներ և այլն). | | մասամբ | |
| զ. ուսումնական հաստատությունն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային անվտանգության լրակազմով, տանիքը պատված է հրակայուն նյութերով. | | մասամբ | |
| է.համակարգչային սարքավորումները, հեռուստացույցներն ամուր են տեղադրված և ամրացված են աշխատատեղերին. | այո | | |
| ը. անիվներով տեղաշարժվող ծանր իրերն ամրացված են հատակին. | այո | | |
| թ. բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները դեկորատիվ իրերը. | այո | | |
| ժ. ուսումնական հաստատության միջանցքների հատակները սայթաքուն չեն, իսկ եթե ծածկված են ուղեգորգերով, ապա դրանք ամրացված են հատակին. | այո | | |
| ժա. ստորին հարկերի պատուհաններն ունեն շարժական մետաղյա վանդակաճաղեր. | | | ոչ |
| ժբ. ուսումնական հաստատության կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է. | այո | | |

| | | | |
|---|---|---|---|
| ժգ. ուսումնական հաստատությունում մշակված և առկա է սաների ու անձնակազմի տարհանման պլան, որում հաշվի են առնված նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները. | այո | | |
| ժդ. ուսումնական հաստատության նախասրահում, բոլոր հարկերում, խմբասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով. | այո | | |
| ժե. ուսումնական հաստատության տարհանման ուղիներն ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով. | այո | | |
| ժզ. ուսումնական հաստատությունում սաների թիվը համապատասխանում է հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին. | այո | | |
| ժէ. խմբասենյակներում սեղան և աթոռների թիվը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված նորմերին. | այո | | |

Հաստատությունում պահպանված են ուսումնադաստիարակչական գործընթացի և աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ անվտանգության և սանիտարահիգիենիկ նորմերը, կազմակերպված են առողջության պահպանման ծառայությունները սաների և աշխատակազմի համար։ Մանկապարտեզն ունի երկու մասնաշենք։ Մանկապարտեզի առաջին մասնաշենքը վերանորոգվել է 2017թ-ին ամբողջությամբ և գտնվում է բարվոք վիճակում, հաստատությունում տեղադրված են եվրոդռներ և պատուհաններ, հատակը սալիկապատ է կամ լամինատապատ, առաստաղը ընդհանուր առմամբ բարվոք վիճակում է։ Ուսումնական հաստատության բոլոր խմբասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, և ջեռուցման ամիսներին խմբասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին, է. Միջանցքները ջեռուցվում են, և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին, Հաստատությունն ապահովված է ջեռուցման, օդափոխության համակարգերով, ջրամատակարարման ներքին ցանցով, տաք ջրամատակարարման և կոյուղու համակարգով։ 2017թ-ին հաստատությունում իրականացվել է ջրատար խողովակների ամբողջական նորոգում, փոխարինում նորերով։ Ուսումնական հաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով, ուսումնական հաստատության բոլոր խմբասենյակներում առկա են առանձնացված վերանորոգված սանհանգույցներ, և բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով (օճառ, թուղթ և այլն) Հաստատության շենքը կայուն է քամիների, սողանքների, երկրաշարժերի նկատմամբ, ապահովված է հակահրդեհային անվտանգության սարքին նոր ձեռք բերված լրակազմով։ Ուսումնական հաստատության ներքին փաստաթղթերը և համապատասխան շինարարական նորմերը ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ հաստատության 12 խմբասենյակները, որոնց մակերեսները 94,4մ2, 128,2մ2, 115,0մ2, 97,0մ2, 112,9 մ2, 124,2 մ2, 126,7, 107,4 մ2, 128,3 մ2, 126,3 մ2, 124,2 և 94,8 մ2 են, որոշակիորեն տարբերվում են ընդունված շինարարական նորմերից (տվյալները ներկայացված են ստորև բերված աղյուսակում ։ Հաստատությունն ունի երաժշտական և մարմնամարզական պարապմունքների համար նախատեսված 3

դահլիճ՝ 296,9մ2 մակերեսով, հատակը՝ լամինատապատ, բուժկետ՝ 10.3մ2 մակերեսով, բուֆետային մաս 84,1մ2մակերեսով, մեթոդկաբինետ 22,2մ2 մակերեսով:
Հաստատությունն ունի թվով ութ մուտքի դուռ, որոնք գտնվում են առաջին հարկում և մուտքի դռները բացվում են դեպի դուրս , իսկ ամբողջական վերանորոգված մասնաշենքի 4 խմբերի ննջարաններից բացվում են ելքային դռներ 2՝ վերևում , 2՝ ներքևում :
Հաստատության շենքը հարմարեցված չէ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների անվտանգ տեղաշարժի համար, թեքահարթակներ առկա չեն: Հաստատության հեռուստացույցերը, համակարգիչը, ծանր իրերը հնարավորինս ամուր են տեղադրված, ամրացված, բաց դարակներում դեկորատիվ իրեր, ծաղկամաններ, ծանր պարագաներ չկան, միջանցքները սալիկապատ են միայն առաջին մասնաշենքի, սակայն սայթաքուն չեն, միջանցքների հատակին գորգեր չկան: Խմբասենյակների պահարանները, հանդերձապահարանները ամրացված են պատերին: Ստորին հարկերի պատուհանները վանդակաճաղեր չունեն: Ուսումնական հաստատության կահույքը՝ պահարանները, սեղանները, աթոռներն ու մահճակալները և անկողնային պարագաները փոխվել են 2017 թվականին վերանորոգման ավարտից հետո: Խմբասենյակներում առկա է տվյալ խմբի սաների քանակության համապատասխան սեղաններ և աթոռներ: Խմբասենյակներում նստարան-սեղանների, սեղան և աթոռների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում են առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված նորմերին Սեղանների շարքերի միջև հեռավորությունը 50 սմ է: Սեղանները դրված են լուսավորվող պատի մոտ, լուսավորությունը ձախակողմյան է: Հաստատությունում առկա են երկտեղանոց մահճակալներ: Խաղալիքների պահարանները հիմնականում ունեն սաների հասակներին համապատասխան բարձրություն, խաղալիքները հասանելի են սաներին: Սանհանգույցներում առկա են կախիչներ սրբիչների համար:Քանի որ որևէ հաստատություն ապահովագրված չէ տարերային աղետների, հրդեհների ռիսկից, ուստի աշխատակազմի և սաների անվտանգության ապահովման նկատառումներից ելնելով՝ հաստատության տարբեր հատվածներում փակցված են տարհանման պլան-սխեմաներ, առկա է հակահրդեհային անվտանգության լրակազմ: Հաստատության աշխատակազմը ծանոթ է տարհանման պլանին, կրակմարիչների տեղադրման վայրերին, հակահրդեհային վահանակի գտնվելու տեղին ու պարագաներին: Հաստատության տարհանման ուղիները ազատ են, զերծ ծանր, տարհանումը խոչընդոտող իրերից (ստորև՝ հաստատության տարհանման պլանի լուսապատճենները՝







Հաստատությունն ունի լիցենզիա:
Ուսումնական հաստատությունում սաների թիվը համապատասխանում է հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին :



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա

ԼԻՑԵՆԶԻԱ № 0244

Սույնով վավերացվում է, որ

<<ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 4 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Հր. Թովմասյան 13
(գտնվելու վայրը)

ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Հր. Թովմասյան 13
(գործունեության իրականացման վայրը)

*Իրավունք ունի իրականացնելու*

**Նախադպրոցական կրթական ծրագիր**

ՆԱԽԱՐԱՐ ____________ (ստորագրությունը) *Լ. Մկրտչյան* (անունը, ազգանունը)

Կ.Տ. « 14 » *մարտի* 2017 թ.

*Անժամկետ*
(լիցենզիայի գործողության ժամկետը)

| Խմբասենյակ | Խմբասենյակի մակերեսը (քմ) | Մեկ սանին բաժին ընկնող մակերեսը (քմ) | Նորմերից պակաս կամ ավելի մակերեսը (քմ) |
|---|---|---|---|
| 1 | 94,4 | 3.14 | +1.14 |
| 2 | 128,2 | 4,27 | +2,27 |
| 3 | 115,0 | 3,83 | +1,83 |
| 4 | 97,0 | 3.23 | +1.23 |

| | | | |
|---|---|---|---|
| 5 | 112,9 | 3,76 | +1,76 |
| 6 | 124,2 | 4,14 | +2,14 |
| 7 | 126,7 | 4,22 | +2,22 |
| 8 | 107,4 | 3,58 | +1,58 |
| 9 | 128,3 | 4,27 | +2,27 |
| 10 | 126,3 | 4,21 | +2,21 |
| 11 | 124,2 | 4,14 | +2,14 |
| 12 | 94,8 | 3,16 | +1,16 |

Հաստատությունում գործում է սաների 12խումբ: Խմբասենյակներից 12-ը, որոնց մակերեսները և մեկ սանին բաժին ընկնող մակերեսը ներկայացված են աղյուսակում, իրենց չափերով համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով սահմանված շինարարական նորմերին:

## 3. ՍԱՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

| Ցուցանիշ | Այո | Ոչ |
|---|---|---|
| ա. ուսումնական հաստատության անձնակազմը և սաները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին. | այո | |
| բ. ուսումնական հաստատության անձնակազմը և սաները տեղեկացված են հաստատությունում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակ, հրշեջ-տեղեկատու, հրշեջ-ծորակ և այլն) գտնվելու տեղերի վերաբերյալ, իսկ անձնակազմը տիրապետում է դրանց օգտագործման կանոններին. | այո | |
| գ. հաստատությունում իրականացվում են տեղական նշանակության վտանգների գնահատման և աղետներին պատրաստվածության վերաբերյալ տարաբնույթ միջոցառումներ. | այո | |
| դ. ուսումնական հաստատությունում առկա է աղետներին պատրաստվածության, քաղաքացիական պաշտպանության պլան, և ուսումնական տարվա ընթացքում գործարկվում է պլանը, իրականացվում են վարժանքներ, վարվում է գրանցամատյան. | այո | |
| ե. ուսումնական հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով. | այո | |
| | | |

| | | |
|---|---|---|
| գ. ուսումնական հաստատության բոլոր խմբասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, և ջեռուցման ամիսներին խմբասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին. | Այո | |
| է. ուսումնական հաստատության միջանցքները ջեռուցվում են, և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին. | այո | |
| ը. ուսումնական հաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով. | այո | |
| թ. ուսումնական հաստատության բոլոր խմբասենյակներում առկա են առանձնացված վերանորոգված սանհանգույցներ | այո | |
| ժ. ուսումնական հաստատության բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով (օճառ, թուղթ և այլն). | այո | |
| ժա. հաշմանդամություն ունեցող անձանց համար կա հարմարեցված սանհանգույց, որի մոտ առկա է հաշմանդամության տարբերանշանը. | | ոչ |
| ժբ. ուսումնական հաստատությունում առկա է սննդի կազմակերպման կետ, որը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին. | այո | |
| ժգ. ուսումնական հաստատության սննդի կազմակերպման կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ. | այո | |
| ժդ. ուսումնական հաստատությունում առկա է բուժկետ, և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն. | այո | |

| Ամսաթիվը | Խումբը | Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագործված պարագաներն ու ուսումնական նյութերը | Մասնակից սաների և աշխատակիցների թիվը |
|---|---|---|---|
| 03,12, 2023թ. | Բոլոր խմբերը | «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում անձնակազմի պատսպարման իրականացումը» թեմայով հատուկ տակտիկական ուսումնական վարժանք | 24/114 |

Լուսանկարներ՝






0081




| Հաստատությունում առկա է բուժկետ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Հաստատությունն ունի բուժաշխատող և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն (ընդգծել այո կամ ոչ բառերը) | | | | | |
| **<u>Այո</u>** | | | Ոչ | | |
| Բուժկետի գտնվելու հարկը և տարածքը (քմ) | Բուժաշխա-տողներ (թիվը և նրանց պաշտոն-ները) | Բուժկետում առկա գույքը | Բուժկետը վերանորոգված է, թե ոչ. | Բուժկետի սանիտարական վիճակը | Առաջին բուժօգնության միջոցների և դեղերի առկայությունը |
| 1-ին հարկ, 84,1 քմ | 1 բուժքույր | 1 գրասեղան, 1 մեծ, 1 փոքր աթոռ, 1 դեղորայքի պահարան, մեկուսարան, առաջին բուժօգնության դեղարկղիկ, առողջապահական բնույթի պաստառներ, 1 գրապահարան, 1 բժշկական թաղթ, հասակաչափ, կշեռք: | ոչ | լավ | Առկա են առաջին բուժօգնության դեղարկղիկը, ՆՈՒՀ-երի համար պարտադիր համարվող դեղորայքը, դիմակ, բախիլ, ձեռնոց, ախտահանող միջոցներ, վիրակապման միջոցներ: |

Ուսումնական հաստատության անձնակազմը տիրապետում է արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին: Այդ նպատակով 2022թ. հեկտեմբերի 15-ին ՀՀ Արարատի մարզի Արտաշատ հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ Փ/Ծ մայոր Զ, Պողոսյանի կողմից հաստատությունում իրականացվել է «Հակահրդեհային տագնապ ազդանշանի դեպքում անձնակազմի պատսպարման իրականացումը» թեմայով հատուկ տակտիկական ուսումնական վարժանք հաստատության բոլոր աշխատակիցների և շուրջ 180 սանի մասնակցությամբ: 2022թ-ի դեկտեմբերի 3 -ին հաստատությունում իրականացվել է գործնական պարապմունք «Օդային տագնապ» աղետների սպառնալիքի ժամանակ շենքի տարածքից սաների և անձնակազմի տարհանում: Նախատեսվում է ուսումնական տարվա ընթացքում ավելացնել անվտանգության բնագավառում կազմակերպվող վարժանքների, սեմինարների թիվը՝ նպատակ ունենալով կատարելագործել անվտանգության ապահովման ուղղությամբ անձնակազմի տեսական գիտելիքները և գործնական հմտությունները: Ուսումնական հաստատության անձնակազմը և սաները տեղեկացված են հաստատությունում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակ, հրշեջ-վահանակ, կրակմարիչներ) գտնվելու տեղերի վերաբերյալ, իսկ անձնակազմը տիրապետում է դրանց օգտագործման կանոններին: Սաները ևս, ըստ տարիքային առանձնահատկությունների, ստանում են գիտելիքներ, թե ինչպես պետք է դրսևորեն իրենց արտակարգ իրավիճակներում:Շենքի տարբեր հատվածներում փակցված են տարհանման պլան-սխեմաներ: Հաստատությունն ունի նաև 2023թ-ի մարտի 31-ին հաստատության տնօրենի հրաման N 31-ով հաստատված և ՀՀ ԱԻՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության կողմից հաստատված քաղաքացիական պաշտպանության պլան: Պլանում առանձնացված են քաղաքացիական պաշտպանության թվով 6 կազմավորումներ, որոնցում ընդգրկված են հաստատության 14 աշխատակիցներ: Աշխատակիցները ծանոթ են պլանով իրենց վերապահված գործառույթներին: 2022թ-ի հոկտեմբերի 7-ին հաստատվել է ՆՈՒՀ-ի աղետների ռիսկի կառավարման պլանը, իրականացվել է վարժանքներ, սերտ համագործակցել ԱԻՆ-ի համապատասխան կառույցի հետ, վարել համապատասխան գրանցամատյան: Հաստատությունն ունի ջեռուցման կենտրոնացված կաթսայատուն, ապահովված է ջեռուցման անվտանգ համակարգով, որը շահագործվում է ջեռուցման ամիսներին, շուրջօրյա: Ջեռուցումն ապահովվում է հաստատության ողջ տարածքում, այդ թվում՝ բոլոր խմբասենյակներում, ննջասենյակներում, միջանցքներում, դահլիճում, խոհանոցում, բուժքրոջ աշխատասենյակում, մեթոդական կաբինետում, որոնցում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ: Ջերմաստիճանը հաստատության տարբեր հատվածներում համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին: Հաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող ջրով: Հաստատության բոլոր խմբասենյակներին կից առկա են վերանորոգված սանհանգույցներ (թվով 9), որոնք օրվա ընթացքում մի քանի անգամ ախտահանվում, մաքրվում են դաստիարակի օգնականների կողմից: Սանհանգույցներում մշտապես առկա են հիգիենայի պարագաներ՝ հեղուկ օճառ, թուղթ, սաներին ոչ հասանելի վայրերում տեղադրված են ախտահանող նյութերով տարաներ, պատերին փակցված են հիգիենիկ միջոցառումների վերաբերյալ ուսուցողական մանկական պաստառներ: Հաստատությունում առկա է սանիտարական նորմերին համապատասխան գործող խոհանոց, որտեղ իրականացվում է սաների համար սննդի պատրաստման ողջ գործընթացը: Խոհանոցի աշխատակիցները, ինչպես նաև հաստատության այն աշխատակիցները, ովքեր օրվա որոշ պահերի գտնվում են խոհանոցում, կրում են գլխարկներ, գոգնոցներ, ձեռնոցներ: Խոհանոցում առկա է օդափոխման համակարգ, էլեկտրական սալօջախ: Սննդի պատրաստումը իրականացվում

է օրական 3-4 անգամ՝ ըստ նախապես հաստատված ճաշացուցակի: Սննդամթերքի պահեստում ապահովվում են սննդամթերքի պահպանման նորմերը: Սննդի կազմակերպման կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ պաստառներ: Հաստատությունում առկա է բուժկետ, որտեղ գտնվում են դեղորայքի և առաջին բուժօգնության պարագաների ապակեպատ պահարանը, առաջին բուժօգնության դեղարկղիկը, սաների անտրոպոմետրիկ չափումների համար նախատեսված հասակաչափը, կշեռքը: Բուժկետում բուժքրոջ կողմից ըստ անհրաժեշտության ցուցաբերվում է առաջին բուժօգնություն սաներին, ինչպես նաև աշխատակիցներին: Բուժքույրը վարում է աշխատակիցների պարտադիր բժշկական զննության, պատրաստի սննդամթերքի նմուշառման, սննդամթերքի խոտանորշման, տարածքների ախտահանումների, աշխատակիցների առողջական վիճակի վերաբերյալ և այլ գրանցամատյաներ, հետևում հաստատությունում սանիտարական և սննդի կազմակերպման նորմերի պահպանմանը:

## 4. ՍԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ, ՀՈԳԵՎՈՐ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

| Ցուցանիշ | Այո | Ոչ |
|---|---|---|
| ա. ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների կողմից իրականացվում են սաների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, կանխարգելման և հանրային քննարկման աշխատանքներ. | այո | |
| բ.ուսումնական հաստատությունն անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների միջոցով իրականացնում է սանի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատաս-խանատվության բարձրացման, ծնողավարման հմտությունների զարգացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ իրազեկման միջոցառումներ. | այո | |

| Ամսաթիվը | Խումբը | Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագործված պարագաներն ու ուսումնական նյութերը | Մասնակիցների թիվը |
|---|---|---|---|
| 10.01.2020թ. | Հանդիպում բոլոր խմբերի ծնողների հետ | Ծնողական ընդհանուր հանդիպում, կրթական ծրագրերի լուսաբանում և վարքային խնդիրների քննարկում: | Ավելի քան 120 |
| 09.09.2020թ. | Ծնողական հանդիպում | Կրթադաստիարակչական | Շուրջ 110 |

| | | | |
|---|---|---|---|
| | | աշխատանքների լուսաբանում և ծնողների դերը այդ աշխատանքներում: | |
| 16.02.2021թ. | Ծնողական կրթության տեղեկատվական թերթիկների բաշխում | Կրթադաստիարակչական աշխատանքները ավագ խմբերում | Շուրջ 60 |
| 28.04.2022թ. | Ծնողական ընդհանուր հանդիպում | Ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ծնողական հմտությունների զարգացման նպատակով հանդիպման շրջանակներում ծնողներին ներկայացվել են տեսանյութ (բժշկի խորհուրդներ), մեր կողմից պատրաստված մասնագիտական պաստառ՝ երեխայի խոսքի զարգացման խնդիրների, դրանց լուծման տարբերակների շուրջ: | Շուրջ 109 |
| 17.05.2022թ. | Զարգացման չափորոշիչները | Հաստատության դահլիճում քննարկեցին երեխաների զարգացման տարիքային առանձնահատկությունները դրանց կարևորությունը և իմացությունը երեխաների ճիշտ դաստիարակության և զարգացման գործ: | Շուրջ 135 |

**Լուսանկարներ ծնողական տարբեր հանդիպումներից՝**




Desktop
2:13 PM

## 5. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ

| Ցուցանիշը | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Մանկավարժական աշխատողների ընդհանուր թիվը | 16 | 17 | 18 | աճ |
| Մանկավարժական աշխատողների միջին շաբաթական ծանաբեռնվա-ծությունը կամ դրույքաչափը | 0,60 | 0,60 | 0,68 | աճ |

2021-2022 ուստարում հաստատության մանկավարժական աշխատողների թվաքանակը նախորդ 2020-2021 ուստարվա համեմատությամբ աճել է մեկով դառնալով տասնյոթ մանկավարժական աշխատողներ, ինչը պայմանավորված է ուստարվա երկրորդ կիսամյակում լոգոպեդի հաստիքի համալրմամբ՝ համաձայն Արտաշատ համայնքի ավագանու 31 մայիսի 2021թ N 29-Ա որոշման։

2022-2023 ուստարում հաստատության մանկավարժական աշխատողների թվաքանակը նախորդ 2021-2022 ուստարվա համեմատ աճել է նս մեկով, դառնալով տասնութ մանկավարժական աշխատողներ, ինչը պայմանավորված է ուստարվա առաջին կիսամյակում ֆիզ. հրահանգիչի հաստիքի համալրմամբ:

2022-2023 ուստարում հաստատության մանկավարժական աշխատողների միջին շաբաթական ծանաբեռնվածությունը նախորդ 2 ուսումնական տարիների համեմատ աճել է 0,60-ից դառնալով 0,68՝ կապված ֆիզ. հրահանգիչի հաստիքի ավելացմամբ:

Տվյալներ հաստատության վարչական կազմի վերաբերյալ

| Պաշտոնը | Անունը, ազգանունը, հայրանունը | Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածը | Տվյալ հաստատությունում աշխատելու ժամանակահատվածը | Պետական պարգևները, կոչումները և այլն |
|---|---|---|---|---|
| Տնօրեն | Լիլիթ Վարդանյան Աշոտի | 12.06.2013թ | 12.06.2013թ մինչ օրս | |
| տնօրենի տեղակալ | Հասմիկ Մկրտչյան | 01.04.2009թ | 12.05.2006թ մինչ օրս | |

## Տվյալներ մանկավարժական խորհրդի կազմի վերաբերյալ

| Անուն, ազգանուն, հայրանուն | Զբաղեցրած պաշտոնը | Կրթությունը | Հաստատության մանկխորհրդի կազմում ընդգրկված լինելու ժամանակահատվածը | Պետական պարգևները, կոչումները և այլն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Լիլիթ | Տնօրեն | Բարձրագույն | 12.06.2013թ մինչ օրս | |
| Մկրտչյան Հասմիկ | Մեթոդիստ | Բարձրագույն | 12.05.2006թ մինչ օրս | |
| Մանուկյան Աննա | Սոց մանկ. | Բարձրագույն | 06.07.2021թ մինչ օրս | |
| Բաբագուլյան Լիլի | Լոգոպեդ | Բարձրագույն | 22.07.2021թ մինչ օրս | |
| Հակոբյան Կարինե | Երաժշ. դաստիարակ | ՄՄԿ | 01.10.1997թ մինչ օրս | |
| Մարտիրոսյան Մերի | Երաժշ. դաստիարակ | ՄՄԿ | 01.04.2000թ մինչ օրս | |
| Գրիգորյան Անահիդա | Դաստիարակ | Բարձրագույն | 08.01.1991թ մինչ օրս | |
| Ղազարյան Սյուզաննա | Դաստիարակ | ՄՄԿ | 06.07.1992թ մինչ օրս | |
| Հակոբյան Անժելիկա | Դաստիարակ | Բարձրագույն | 02.06.2014թ մինչ օրս | |
| Նալբանդյան Հասմիկ | Դաստիարակ | Բարձրագույն | 15.09.2020թ մինչ օրս | |
| Մարգարյան Գայանե | Դաստիարակ | Բարձրագույն | 01.04.2004թ մինչ օրս | |
| Սարիբեկյան Աննա | Դաստիարակ | ՄՄԿ | 18.07.2005թ մինչ օրս | |
| Սարգսյան Նելլի | Դաստիարակ | ՄՄԿ | 23.08.2004թ մինչ օրս | |
| Հայրապետյան Սիրանուշ | Դաստիարակ | ՄՄԿ | 08.09.2009թ մինչ օրս | |
| Նալբանդյան Գոհար | Դաստիարակ | Բարձրագույն | 01.02.2019թ մինչ օրս | |
| Ավետիսյան Անուշ | Դաստիարակ | ՄՄԿ | 15.0.2013թ մինչ օրս | |
| Մանուկյան Սեդա | Դաստիարակ | Բարձրագույն | 01.0.2017թ մինչ օրս | |
| Հովհաննիսյան Էվելինա | Դաստիարակ | Բարձրագույն | 15.09.2020թ մինչ օրս | |
| Այվազյան Սեդա | Դաստիարակ | ՄՄԿ | 01.11.2019թ մինչ օրս | |

| Ցուցանիշ | |
|---|---|
| ա. մանկավարժական աշխատողներից քանիսն ունեն գիտական կոչում. | ------ |
| բ. մանկավարժական աշխատողներից քանիսն են վերջին 5 տարում վերապատրաստում անցել նախարարության կողմից երաշխավորված կազմակերպություններում. | 9 |
| գ. մանկավարժական աշխատողներից քանիսն են վերապատրաստվել որպես վերապատրաստող (դասախոս) և վարում են վերապատրաստման դասընթացներ. | ----- |
| դ. որքան է մանկավարժական աշխատողների միջին տարիքը. | 41 |
